



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 28Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ ՌԵՏՈՒՆԻ ԱՍԻԿՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի միջնորդությունը, Ռ.Ասիկյանի դիմումը, նրա աշխատանքային փորձը, պարտականությունների կատարման նկատմամբ բարձր պատասխանատվությունը և ղեկավարվելով «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալ, գլխավոր ֆինանսիստ Ռ.Ասիկյանի պաշտոնավարման ժամկետը երկարաձգել 1 տարի ժամկետով՝ մինչև 2019 թվականի հունվարի 13-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 14-ից:

**Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ**

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 07
ք. Երևան